



Շաբաթական ակնարկ 09.02.2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:


Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին խառը արդյունքներ:



Բոլոր հիմնական կրիպտոարժույթները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:




Բացասական եկամտաբերություն արձանագրեցին միայն տեխնոլոգիական և երկրորդային անհրաժեշտության ապրանքների ոլորտները:




Բոլոր ժամկետայնության պարտատոմսերի եկամտաբերությունները նվազեցին:




Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը նվազեց 0.20% -ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը նվազեց 1.97%-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը անց 2.45%-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը անց 2.07%-ով



- Շուկայի մասնակիցների սպասումները 2026 թվականին Դաշնային պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքի նվազեցման վերաբերյալ աճեցին:
- Սպասումները կտրուկ աճեցին ֆոնդային շուկայի անկման և աշխատաշուկայի թույլ տվյալների ֆոնին:



Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան

- Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսներից դրական եկամտաբերություն արձանագրեցին Dow Jones-ը և Russell2000-ը, իսկ S&P 500-ը և Nasdaq-ն արձանագրեցին բացասական եկամտաբերություն:
- Երկուշաբթի օրվա թուլությանը հաջորդեց ժամանակավոր վերականգնում, սակայն չորեքշաբթի անկումը վերսկսվեց: Առավել ուժեղ անկում արձանագրվեց տեխնոլոգիական ինդեքսներում:
- Ուրբաթ ինդեքսները վերականգնվեցին, որը մակրոտնտեսական սպասումների կայունացման արդյունք էր: Այս վերականգնումը համընկավ ներդրողների շրջանում ռիսկի տրամադրության աճի և անկման մոմենտումի նվազման հետ:
- Այնուամենայնիվ, ընդհանուր կատարողականը արտացոլում է մակրոտնտեսական գործոնների նկատմամբ զգայունության բարձրացումը:



**Տատանողականությունը
տեխնոլոգիական
բարձրանում է:**


ոլորտում

- Նախորդ շաբաթ Փառահեղ յոթնյակը արձանագրեց բացասական եկամտաբերություն, սակայն S&P493-ը արձանագրեց դրական եկամտաբերություն:
- Ներդրողները սկսել են ավելի զգուշորեն վերաբերել տեխնոլոգիական ոլորտին և անկայունության ազդակները առաջին հերթին սկսել են ազդել տեխնոլոգիական ոլորտի վրա:



Նախորդ շաբաթ ոլորտների կատարողականը ցույց տվեց հստակ ռոտացիա:

- Էներգետիկայի, արդյունաբերական, նյութերի և առաջնային անհրաժեշտության սպառողական ապրանքների ոլորտները արձանագրեցին դրական բարձր եկամտաբերություն:
- Ի տարբերություն դրա, տեխնոլոգիական և երկրորդային անհրաժեշտության սպառողական ապրանքների ոլորտները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:
- Էներգետիկայի և նյութերի ոլորտների համեմատական աճը վկայում է առանձին ակտիվների եկամտաբերության և պաշտպանական պրոֆիլների դիմադրողականության մասին:
- Միևնույն ժամանակ, տեխնոլոգիական ոլորտի թուլությունը արտացոլում է անհանգստություն աճի ոլորտում, մինչդեռ երկրորդային անհրաժեշտության ապրանքների ոլորտի թույլ կատարողականը վկայում է տնտեսական աճի վրա ճնշման սպասումներ:



Alphabet-ը (GOOGL) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 88.5 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 14%-ով ավելի է, ինչը պայմանավորված է Google Search-ի և YouTube-ի գովազդի շարունակական աճով, ինչպես նաև Google Cloud-ի ուժեղ աճով, Google Cloud-ի հասույթը տարեկան կտրվածքով աճել է մոտ 28%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 2.91 դոլար, ինչը գերազանցել է սպասումները: Չնայած սպասումները զգալիորեն գերազանցելուն, ընկերության բաժնետոմսերը հայտվեցին ճնշման տակ, քանի որ ներդրողները կենտրոնացել են ամպային տեխնոլոգիաների ներդրման դանդաղման և արհեստական բանականության ենթակառուցվածքների ծախսերի աճի վրա:



Amazon.com-ի (AMZN) հասույթը 2025 թվականի 4-րդ եռամսյակում կազմել է 195.8 միլիարդ դոլարի, որը տարեկան մոտ 11%-ով ավելի է, ինչը պայմանավորված է Հյուսիսային Ամերիկայի մանրածախ առևտրի և AWS-ի ուժեղ ցուցանիշներով: Գործառնական շահույթը կազմել է 21.9 միլիարդ դոլար, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 3.78 դոլար, ինչը գերազանցում է սպասումները, քանի որ AWS-ը շարունակում է պահանջված լինել արհեստական բանականություն օգտագործող բիզնեսների կողմից: Ընկերության բաժնետոմսերը արձանագրեցին կտրուկ անկում, քանի որ ներդրողները վերագնահատեցին AWS-ի 2026 թվականի զգուշավոր աճի կանխատեսումները:



Eli Lilly-ն (LLY) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 12.4 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 18%-ով ավելի է, ինչը պայմանավորված է շաքարախտի և գիրացման դեմ դեղամիջոցների վաճառքներով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 6.22 դոլար, ինչը զգալիորեն ավելի բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածից և գերազանցում է սպասումները՝ պայմանավորված շահութաբերության բարելավմամբ և նոր արտադրանքի ներդրմամբ: Շուկան դրական արձագանքեց, ներդրողները գնահատեցին ուժեղ աճը և 2026 թվականի լավատեսական հեռանկարները, ներառյալ էնդոկրինոլոգիայի և ուռուցքաբանության պորտֆելների ընդլայնումը:




Palantir-ը (PLTR) 2025 թվականի 4-րդ եռամսյակում ստացել է 1.82 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 12%-ով ավելի է, ինչը պայմանավորված է կառավարական և առևտրային պայմանագրերի ընդլայնմամբ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 0.22 դոլար, որը մի փոքր ավելի բարձր է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Հաշվետվությունը ընդհանուր առմամբ դրական էր, քանի որ ընկերությունը վերահաստատել է իր բազմամյա աճի նպատակները, որոնք կենտրոնացած են արհեստական բանականության վրա հիմնված վերլուծության և ձեռնարկությունների ավելի լայն կիրառման վրա: Սակայն ընկերության բաժնետոմսերը նվազեցին՝ արտացոլելով ոլորտի շուրջ աճող անհանգստությունները:



Այս գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության դինամիկան՝ տարբեր տարբեր ժամկետայնության պարտատոմսերի համար՝ 2, 5, 7, 10 և 30 տարի:

- Նախորդ շաբաթ բոլոր ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց, որը արտացոլում է լայն մակրոտնտեսական տեղաշարժ, այլ ոչ թե մարման ժամկետներին բնորոշ վերագնահատում:
- Հինգշաբթի բոլոր մարման ժամկետներում տեղի ունեցավ կտրուկ և համաժամանակյա անկում, ինչը վկայում է դիսկից խուսափելու հանկարծակի տեղաշարժի և անվտանգ ակտիվների նկատմամբ պահանջարկի աճի մասին:
- Ընդհանուր առմամբ, եկամտաբերության կորի վարքագիծը արտացոլում է մակրոտնտեսական անորոշության պատճառով դեպի բարձր որակի ակտիվներ ժամանակավոր անցումը: Եկամտաբերությունը մասամբ վերականգնվեց ժամանակահատվածի վերջում, բայց մնաց նախորդ մակարդակներից ցածր մակարդակում:



Չնայած ուրբաթ օրվա վաճառքին, դոլարը շաբաթն ավարտեց բարձր դիրքերում՝ փորձարկելով երկշաբաթյա առավելագույն ցուցանիշները (երեք շաբաթ անընդմեջ անկումից հետո):




Ոսկին ուրբաթ վերադարձավ 5000 դոլարի մակարդակի մոտ, բայց դեռևս 9%-ով էժանացել է Ուորշի առաջադրումից ի վեր:



Թանկարժեք մետաղների և պղնձի գների դինամիկան

- Նախորդ շաբաթ թանկարժեք և արդյունաբերական մետաղները արձանագրեցին զգալի անկայունություն, որին հաջորդեց մասնակի կայունացում:
- Արծաթը և պլատինը ունեցել են ամենակտրուկ անկումը՝ զգալիորեն հետ մնալով ոսկուց և պղնձից: Վաճառքը ուժեղացել են հատկապես հինգշաբթի՝ համընկնելով ընդհանուր շուկայական լարվածության հետ:
- Ոսկին ցուցաբերեց համեմատաբար կայունություն դինամիկա և ժամանակահատվածն ավարտեց փոքր-ինչ դրական արդյունքով, մինչդեռ պղինձը, արծաթը և պլատինը շաբաթը ավարտեցին բացասական եկամտաբերությամբ:
- Ոսկու և ավելի ցիկլիկ մետաղների միջև տարբերությունը ենթադրում է, որ ներդրողները նախընտրել են պաշտպանական դիրքերը՝ աճի փոխարեն:
- Արծաթի և պլատինի թուլությունը արտացոլում է դրանց ավելի բարձր բետա գործակիցները:


Ընդհանուր առմամբ, մետաղների գների դինամիկան վկայում է դիսկի ախորժակի ժամանակավոր նվազման մասին:



Նավթի գները շաբաթն ավարտեցին անկմամբ՝ տատանվելով Իրան-ԱՄՆ բանակցություններից ստացված լուրերի ֆոնին:



Բոլոր հիմնական կրիպտոարժույթները արձանագրեցին բացասական եկամտաբերություն: Ethereum-ը և Solana-ն արձանագրեցին ամենախորը անկումը, մինչդեռ Bitcoin-ը և Ripple-ը համեմատաբար փոքր անկումներ գրանցեցին, բայց մնացին խորը բացասական մակարդակներում: Անկումը արագացավ ժամանակահատվածի կեսին, երբ ռիսկի նկատմամբ ախորժակը նվազեց, նախքան վերջում փոքր-ինչ վերականգնվելը: Կրիպտոարժույթները իրենց դրսևորեցին որպես բարձր ռիսկային ակտիվներ՝ հետևելով ֆոնդային ինդեքսներին և բացասաբար արձագանքելով տոկոսադրույքների սպասումների փոփոխություններին:




ԱՄՆ կառավարությունը վճարում է ապշեցուցիչ բարձր տոկոսագումարներ:

ԱՄՆ կառավարության պարտքի տոկոսավճարները օտարերկրյա պարտատերերին 2025 թվականի երրորդ եռամսյակում աճել են՝ հասնելով ռեկորդային 292 միլիարդ դոլարի: Այս ցուցանիշը կրկնապատկվել է 2020 թվականից ի վեր: ԱՄՆ ֆինանսների նախարարությունն այժմ ԱՄՆ պարտքի միջազգային պարտատերերին վճարում է վեց անգամ ավելի, քան 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից առաջ: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ օտարերկրյա ներդրողները պահում են ռեկորդային 9.1 տրիլիոն դոլարի ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր, ինչը չորս անգամ ավելի է, քան 2005 թվականին:

Interest Payments to Foreign Holders of U.S. Debt Hit a Record in Q3 2025

Interest Payments
Q3 2025
\$292 Billion



Source: Bureau of Economic Analysis


www.econovis.net

@econovisuals



ԱՄՆ աշխատաշուկան շարունակում է թուլանալ արագ տեմպերով:

Դեկտեմբերին ԱՄՆ-ում աշխատատեղերի թիվը նվազել է 386,000-ով՝ հասնելով 6.5 միլիոնի, ինչը ամենացածր ցուցանիշն է 2020 թվականի սեպտեմբերից ի վեր: Վերջին երկու ամիսների ընթացքում աշխատատեղերի թիվը նվազել է 907,000-ով, ինչը ամենամեծ երկամսյա անկումն է 2023 թվականի մարտից ի վեր: 2022 թվականի մարտի իր գագաթնակետից ի վեր այժմ առկա աշխատատեղերի թիվը կտրուկ նվազել է 5.6 միլիոնով: Արդյունքում, աշխատատեղերի և գործազրկության հարաբերակցությունը նվազել է մինչև 0.87-ի, ինչը ամենացածրն է 2021 թվականի փետրվարից ի վեր և զգալիորեն ցածր է համավարակից առաջ գրանցված 1.24-ից:



Volatility Shares files for 21 5x levered ETFs

Fund name	Target
5x AMD ETF	Advanced Micro Devices Inc.
5x AMZN ETF	Amazon.com Inc.
5x COIN ETF	Coinbase Global Inc.
5x CRCL ETF	Circle Internet Group Inc.
5x GOOGL ETF	Alphabet Inc. Class A
5x MSTR ETF	Strategy Inc.
5x NVDA ETF	Nvidia Corp.
5x PLTR ETF	Palantir Technologies Inc.
5x TSLA ETF	Tesla Inc.
5x Bitcoin ETF	Bitcoin
5x Ether ETF	Ethereum
5x Solana ETF	Solana
5x XRP ETF	XRP
5x GDX ETF	VanEck Gold Miners ETF
5x GLD ETF	SPDR Gold Shares
5x MAGS ETF	Roundhill Magnificent Seven ET
5x SLV ETF	iShares Silver Trust
5x SOXQ ETF	Invesco PHLX Semiconductor ETF
5x SPY ETF	SPDR S&P 500 ETF Trust
5x QQQ ETF	Invesco QQQ Trust Series I
5x IWM ETF	iShares Russell 2000 ETF

Source: SEC


Նախորդ տարի հոկտեմբերին, որոշ ընկերություններ հայտ ցանկություն հայտնեցին ստեղծել 5x լծակով ETF-ներ, որոնք հիմնված կլինեին ամենաանկայուն ակտիվների վրա:

Դրանք չհաստատվեցին, բայց եթե հաստատվեին, մենք ականատես կդառնաինք 5x լծակով արծաթե ETF-ի (հունվարի 31-ին), 5x լծակով XRP ETF-ի, ինչպես նաև 5x լծակով AMD ETF-ի (փետրվարի 4-ին) և 5x լծակով ETH ETF-ի, որոնք գրանցված կտրուկ անկմաը կարճաժամկետին 5x լծակով (leverage) գրեթե խորը անկումներին:

MicroStrategy (MSTR) ընկերության բաժնետոմսերը 80%-ով նվազել են 2024 թվականի նոյեմբերի գագաթնակետից: Մայքլ Սելյորի Bitcoin-ի դիրքը նվազել է և այժմ չռեալիզացված վնասը կազմում է ավելի քան 6.5 միլիարդ դոլար:



Գրասենյակային անշարժ գույքի համար նախատեսված առևտրային հիփոթեքային ապահովագրված արժեթղթերի (CMBS) չվճարման մակարդակը հունվարին աճել է 103 բազային կետով՝ հասնելով ռեկորդային բարձրակետի՝ 12.3%-ի: Սա 1.6 տոկոսային կետով ավելի է, քան 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից հետո գրանցված գագաթնակետը: Վերջին երեք տարիների ընթացքում CMBS չվճարման մակարդակը աճել է 600%-ով: Միևնույն ժամանակ, բազմաբնակարան շենքերի CMBS չվճարման մակարդակը աճել է 30 բազային կետով՝ հասնելով 6.9%-ի, որը երրորդ ամենաբարձր մակարդակն է 2015 թվականի դեկտեմբերից ի վեր: ԱՄՆ-ում CMBS-ի չվճարման ընդհանուր մակարդակը աճել է 17 բազային կետով՝ հասնելով 7.5%-ի, որը ամենաբարձրն է առնվազն հինգ տարվա ընթացքում:



Այս շաբաթ 423 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2025 թվականի չորրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Coca-Cola (KO), Cisco (CSCO), AstraZeneca (AZN), McDonald's (MCD), Shopify (SHOP), T-Mobile US (TMUS), S&P Global (SPGI) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

#1 / 423 Total

[save as portfolio](#) | [create alert](#) Refresh: 3min | [off](#)

← Page 1 / 22 →

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	KO	Coca-Cola Co	Consumer Defensive	Beverages - Non-Alcoholic	USA	337.72B	25.99	78.51	1.50%	21,551,886
2	CSCO	Cisco Systems, Inc	Technology	Communication Equipment	USA	325.41B	31.05	82.36	1.48%	24,195,315
3	AZN	Astrazeneca plc	Healthcare	Drug Manufacturers - General	United Kingdom	290.19B	31.08	187.16	-0.15%	3,375,361
4	AMAT	Applied Materials Inc	Technology	Semiconductor Equipment & Materials	USA	241.05B	35.05	303.99	2.15%	8,491,579
5	MCD	McDonald's Corp	Consumer Cyclical	Restaurants	USA	230.37B	27.59	323.48	-0.06%	3,829,198
6	TMUS	T-Mobile US Inc	Communication Services	Telecom Services	USA	225.78B	19.41	201.86	0.03%	7,189,838
7	GILD	Gilead Sciences, Inc	Healthcare	Drug Manufacturers - General	USA	185.32B	23.14	149.37	2.15%	9,134,160
8	ANET	Arista Networks Inc	Technology	Computer Hardware	USA	162.03B	48.97	128.67	-1.24%	9,585,520
9	SHOP	Shopify Inc	Technology	Software - Application	Canada	145.18B	81.46	111.24	-2.44%	17,826,834
10	SPGI	S&P Global Inc	Financial	Financial Data & Stock Exchanges	USA	136.78B	32.84	451.71	-2.96%	5,004,723
11	WELL	Welltower Inc	Real Estate	REIT - Healthcare Facilities	USA	131.13B	144.00	191.06	3.01%	2,486,583
12	BUD	Anheuser-Busch InBev SA/NV ADR	Consumer Defensive	Beverages - Brewers	Belgium	129.78B	21.37	74.99	0.68%	3,218,333
13	APP	Applovin Corp	Communication Services	Advertising Agencies	USA	126.81B	47.29	375.23	-3.13%	8,694,084
14	VRTX	Vertex Pharmaceuticals, Inc	Healthcare	Biotechnology	USA	116.41B	32.34	458.81	-2.49%	1,670,951
15	ENB	Enbridge Inc	Energy	Oil & Gas Midstream	Canada	110.13B	27.67	50.49	0.66%	4,378,046
16	BN	Brookfield Corporation	Financial	Asset Management	Canada	109.75B	125.06	44.31	-3.42%	6,285,212
17	BP	BP plc ADR	Energy	Oil & Gas Integrated	United Kingdom	98.05B	65.05	38.17	-2.63%	10,734,325
18	CVS	CVS Health Corp	Healthcare	Healthcare Plans	USA	96.90B	199.45	76.33	1.45%	8,133,147
19	DUK	Duke Energy Corp	Utilities	Utilities - Regulated Electric	USA	95.97B	19.40	123.41	0.98%	4,218,094
20	AEM	Agnico Eagle Mines Ltd	Basic Materials	Gold	Canada	95.11B	27.67	189.45	-4.58%	3,980,119

Filters: earningsdate:nextweek

[export](#)

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, FEB. 9					WEDNESDAY, FEB. 11
10:50 am	Atlanta Fed President Raphael Bostic speaks				8:30 amU.S. employment reportJan.60,00050,000
1:30 pm	Fed governor Christopher Waller speaks				8:30 amU.S. unemployment rateJan.4.4%4.4%
2:30 pm	Fed governor Stephen Miran speaks				8:30 amU.S. hourly wagesJan.0.3%0.3%
5:00 pm	Fed governor Stephen Miran podcast interview				8:30 amHourly wages year over year3.7%3.8%
TUESDAY, FEB. 10					2:00 pmMonthly U.S. federal budget
6:00 am	NFIB optimism index	Dec.			99.5
8:30 am	Employment cost index	Q4			0.8%
8:30 am	Import price index (delayed report)	Dec.			0.4%
8:30 am	Import price index minus fuel	Dec.			0.6%
8:30 am	U.S. retail sales (delayed report)	Dec.			0.6%
8:30 am	Retail sales minus autos	Dec.			0.5%
10:00 am	Business inventories (delayed report)	Nov.			0.3%
12:00 pm	Cleveland Fed President Beth Hammack speaks				
1:00 pm	Dallas Fed President Lorie Logan speaks				
					THURSDAY, FEB. 12
					8:30 amInitial jobless claimsFeb. 7
					10:00 amExisting home salesJan.4.35 million
					7:05 pmFed governor Stephen Miran speaks
					FRIDAY, FEB. 13
					8:30 amConsumer price indexJan.0.3%
					8:30 amCPI year over yearJan.2.7%
					8:30 amCore CPI0.2%
					8:30 amCore CPI year over year2.6%



Bank

Handwritten: *Handwritten blue ink: Hauptstadt: Amsterdam*

1. Definition
 2. Ursachen
 3. Symptome
 4. Diagnose
 5. Therapie
 6. Prognose
 7. Fazit

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank.am